ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը՝ իբրև ուսուցման և դաստիարակության բարձրացման կարևոր պայման

Հետազոտող ուսուցիչ՝ Նոնա Վարոսյան
Նարինե Մաթևոսյան
Թամարա Հովսեփյան
Վանաձորի ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Հետազոտության արդիականությունը ..... **Error! Bookmark not defined.**

Գլուխ 1. Կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը 4

1.2. Իմացական գործընթացների զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում 6

Ընկալման զարգացում 6

Ուշադրության զարգացումը..... **Error! Bookmark not defined.**

Հիշողության զարգացումը 10

1.3. Մտածողության զարգացումը 11

1.4. Երևակայության զարգացումը.....12

1.6. Անձի զարգացումը.....13

1.7. Դրդապատճառային ոլորտ.....13

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանկ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը հանդիսանում է ուսուցման և դաստիարակության պրոցեսի արդյունավետության բարձրացման կարևոր պայմաններից մեկը:

Ուսուցիչը պետք է ունենա բազային գիտելիքներ կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկությունների, հոգեկան զարգացման օրինաչափությունների մասին, կարողանա վերլուծել կրտսեր դպրոցականի, իմացական, անձնային, դրդապատճառային առանձնահատկությունները:

Դաստիարակության հաջողությունը հիմնականում կախված է ուսուցիչների և ծնողների կողմից երեխաների տարիքային զարգացման օրինաչափությունները գիտենալուց և յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկություններն ի հայտ բերելու կարողությունից:

Սրանով է պայմանավորված հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երեխա դպրոց է մտնում արդեն որոշակիորեն ձևավորված կենսափորձով, զարգացվածության, հաղորդակցական կարողությունների որոշակի մակարդակով, տարբեր նախասիրություններով, դաստիարակչական աշխատանքը տարրական դպրոցում սկսվում է այս ամենի մանրամասն ուսումնասիրությամբ, ինչի վրա էլ հենվում է հետագա ողջ աշխատանքը: Երեխայի անձնավորության հաջող զարգացման համար անհրաժեշտ է խելացիորեն կազմակերպել նրա գործունեությունը, ճիշտ ընտրել տեսակներն ու ձևերը, սիստեմատիկ վերահսկողություն սահմանել նրա ընթացքի ու արդյունքների վրա: Երեխայի գործունեությունը պետք է կազմակերպվի տվյալ տարիքի հնարավորությունները հաշվի առնելով, նկատի ունենալով հաջորդ տարիքային շրջանին անցնելու մղումը:

Հետազոտության նպատակը ուսումնասիրել կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները և կիրառել տարրական դասարաններում ուսուցման և դաստիարակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կրտսեր դպրոցական տարիք, անհատի օնտոգենետիկ զարգացման փուլն է, մանկության գագաթնակետը: Երեխան պահպանում է մանկական շատ որակներ՝ թեթևամտությունը, միամտությունը: Բայց նա արդեն սկսում է կորցնել մանկական անմիջականությունը վարքում, նրա մոտ առաջանում է մտածողության ուրիշ տրամաբանություն: Ուսումը նրա համար նշանակալից գործունեություն է: Դպրոցում երեխան ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ, կարողություններ, այլև որոշակի սոցիալական կարգավիճակ: Փոխվում են հետաքրքրությունները, արժեքները, երեխայի կյանքի ամբողջ դրվածքը: Անկախ այն բանից, թե երբ է երեխան դպրոց գնում՝ 6, թե 7 տարեկանում, նա իր զարգացման որոշակի շրջանում անցնում է ճգնաժամի միջով: Այդ բեկումը կարող է սկսվել 7 տարեկանից, բայց կարող է և տեղավորվել 6-8 տարեկանների արանքում: 7 տարեկանի ճգնաժամը խիստ կապված է իրավիճակի խիստ փոփոխությունների հետ: Կարևոր այն է, թե ինչպես է երեխան ապրում այն հարաբերությունների համակարգը, որում ներառված է. լինի դա կայուն կամ խիստ փոփոխվող հարաբերություններ: Փոխվել է հարաբերությունների համակարգում սեփական տեղի ընկալումը, նշանակում է, փոխվում է զարգացման սոցիալական իրադրությունը, և երեխան հայտնվում է նոր տարիքային փուլի սահմանին: Կրտսեր դպրոցական տարիքը ընդգրկում է 6-7 ից մինչև 10-11 տարեկանը, որը համընկնում է հանրակրթության դպրոցի հետ: Այս տարիքի կենսաբանական զարգացումը և տարիների փորձը ցույց է տվել, որ 6-7 տարեկան երեխաները իրենց ֆիզիկական ու հոգեկան զարգացման մակարդակով հիմնականում պատրաստ են դպրոցական ուսուցման: Կրտսեր դպրոցականները դպրոց են հաճախում

գիտելիքների և կենսափորձի որոշակի պաշարով: Հատկապես մանկապարտեզից եկածները ազատ կերպով կարողանում են հաղորդակցվել արտասանել, նկարել, երգել, խաղալ և այլն: Նրանք ունեն վարքի և վարվելակերպի կանոնների իմացության որոշակի մակարդակ: Յոթից տաս տարեկան երեխաների ֆիզիկական զարգացումը ընթանում է խաղաղ, բնականոն ձևով: Ոսկրամկանային համակարգը դեռևս գտնվում է ամրապնդման ու կոճիկացաման փուլում: Ողնաշարի, դաստակի և մատների հոդերը դեռևս չեն ձևավորվել, ուստի խորհուրդ չի տրվում երեխաներին ծանրաբեռնել ծանր ֆիզիկական աշխատանքով: Երեխաների զգայարանները նորմայի սահմաններում լիովին ընդունակ են հակազդելու համապատասխան գրգռիչներով: Նրանք տարբերում են գույների , ձայների նրբերանգները և զգայունակությունը բավականին բարձր է: Զգայական հիմքի վրա էլ զարգանում են նրանց բարձրագույն հոգեկան ֆունկցիաները՝ ընկալումը, հիշողությունը, մտածողությունը և երևակայությունը:

Դպրոց ընդունվելուց հետո առաջատար գործունեությունը դառնում է ուսումը, թեև խաղը ուղեկցվում է երեխաներին, կատարելով ժամանցի ու հանգստի ֆունկցիա:

1.1. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրտսեր դպրոցականներն ունեն իրենց տարիքին հատուկ մի քանի առանձնահատկություններ, որոնք նախադպրոցական տարիքի օրգանական շարունակությունն են: Առաջին հերթին այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են: Այդ պատճառով էլ նրանք բազմաթիվ ու բազմապիսի հարցեր են տալիս ուսուցիչներին, ծնողներին ու ծանոթներին: Կրտսեր դպրոցականների մյուս բնորոշ գիծը նրանց հուզական բարձր գրգռվածությունն է: Ուսուցչի հուզիչ խոսքը , վառ գույները, դիտած կինոնկարը, կարդացած հեքիաթը ամբողջությամբ գրավում, կլանում են երեխաներին: Սրան հակառակ երկար ու ձանձրալի խոսքային չոր շարադրանքը, խրատական քարոզները հոգնեցնում, շեղում է նրանց ուշադրությունը: Կրտսեր տարիքի մյուս առանձնահատկությունը ընդօրինակումն է: Նրանք շատ են սիրում կրկնել ու վերարտադրել մեծերի շարժումները, վարքի ձևերը: Նրանց

ընդօրինակաման առաջին օբյեկտը ուսուցիչն է, որը նրանց համար դառնում է ամենաբարձր հեղինակությունը: Ցավոք, երեխաները ընդօրինակում են նաև բացասական երևույթները, ուստի չափահասները պետք է խուսափեն բացասական վարքի ձևերից: Կրտսեր տարիքի մյուս բնորոշ գիծը կոլեկտիվիզմն է, համատեղ աշխատանքի մեջ ներգրավվելը: Նրանք ձգտում են ամեն ինչով աչքի ընկնել, արժանանալ հասակակիցների նուսուցիչների գովասանքին: Ուսուցչի խրախուսանքից ավելի ակտիվ ու նախաձեռնող են դառնում: Սրան հակառակ, ընկերներից ետ մնալը, պարսավանքի արժանանալը, նրանց մեջ առաջացնում է բացասական հուզական վիճակներ, հոգեկան ակտիվության անկում: Համատեղ ուսումնական աշխատանքն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական հատկանիշներ՝ աշխատասիրություն, ընկերասիրություն, հոգատարություն, կամային վճռականություն և պարտքի զգացում:

1.2. ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ԸՆԿԱԼՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երեխան իսկապես դառնում է դպրոցական այն ժամանակ, երբ ձեռք է բերում համապատասխան ներքին դիրք: Նա ներառվում է իր համար նշանակալից ուսումնական գործունեության մեջ՝ կողնորոշվելով այն բանի հասարակական արժեքի վրա, ինչ անում է: Խաղի նկատմամբ հետաքրքրության կորուստը կապված է հենց խաղային գործունեության զարգացման առանձնահատկությունների հետ: 3-5 տարեկանում երեխաները հաճույք են ստանում խաղի գործընթացից, 5-6 տարեկանում՝ ոչ միայն գործընթացից, այլև արդյունքից, շահումից: Կանոններով խաղերում, որոնք բնորոշ են նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքներին, հաղթում է նա, ով ավելի լավ է յուրացրել խաղը: Խաղային մոտիվացիայում գործընթացից շեշտադրվում է արդյունքը, բացի այդ, զարգանում է հասնելու դրդապատճառը: Մանկական խաղի զարգացման ընթացքը հանգեցնում է նրան, որ խաղային մոտիվացիան աստիճանաբար իր տեղը զիջում է ուսումնականին,

որի ընթացքում գործողությունները կատարվում են կոնկրետ գիտելիքների, կարողությունների համար:

Այսպիսով, կրտսեր դպրոցական տարիքում ուսումնական գործունեությունը դառնում է առաջնային: Այն բավական բարդ գործունեություն է, որը պահանջում է ժամանակ և ջանքեր. 10-11 տարի և այն ունի որոշակի կառուցվածք:

Առաջին բաղադրիչը մոտիվացիան է: Ուսումնական գործունեությունը դրդվում և ուղղորդվում է ուսումնական տարբեր դրդապատճառներով: Նրանցում կան դրդապատճառեր՝ առավել ադեկվատ ուսումնական խնդիրներին. եթե նրանք ձևավորվում են աշակերտի մոտ, նրա ուսումնական գործունեությունը դառնում է արդյունավետ, իմաստավորված: Դ. Էլկոնինը դրանք անվանել է ուսումնա-ճանաչողական դրդապատճառներ: Հիմքում ընկած են ճանաչողության և ինքնազարգացման պահանջմունքները: Երեխան պետք է մոտիվացված լինի ոչ միայն ուսումնական գործունեության արդյունքով այլև հենց նրա գործընթացով: Սա նաև սեփական անձնային աճի, ինքնակատարելագործման, ընդունակությունների զարգացման դրդապատճառն է:

Երկրորդ բաղադրիչը ուսումնական խնդիրն է, այսինքն՝ առաջադրանքների համակարգը որոնց կատարման ընթացքում երեխան յուրացնում է գործողությունների առավել ընդհանուր միջոցներ: Սովորաբար երեխաները, լուծելով մեծ քանակությամբ կոնկրետ առաջադրանքներ, իրենք են բացահայտում նրանց լուծման ընդհանուր միջոցը, ընդ որում այն միջոցը տարբեր աշակերտների կողմից գիտակցվում է տարբեր չափով: Զարգացնող ուսուցումը ենթադրում է երեխաների և ուսուցչի կողմից խնդիրների մի մեծ խմբի լուծման միջոցի համատեղ բացահայտում և ձևակերպում: Այս դեպքում ընդհանուր միջոցը դառնում է օրինակ և հեշտ տարածվում է այդ դասի այլ առաջադրանքների վրա, ուսումնական գործունեությունը դառնում է առավել արդյունավետ, իսկ սխալներն աստիճանաբար վերանում են:

Երրորդ բաղադրիչը ուսումնական օպերացիաները են և մտնում են գործողությունների միջոցի մեջ: Օպերացիան և ուսումնական խնդիրը ուսումնական գործունեության կառուցվածքի հիմնական օղակն են: Աշակերտը, կողմնորոշվելով օպրեացիաների կազմում, կատարում է դրանք նյութականացված՝ ուսուցչի վերահսկողության տակ: Սովորելով դա անել գրեթե անսխալ՝ նա անցում է կատարում

արտասանմանը, և օպերացիաների կազմի կրճատման փուլում նա արագ լուծում է խնդիրը մտքում՝ հաղորդելով ուսուցչին պատրաստի պատասխանը։

Չորրորդ բաղադրիչը հսկողությունն է։ Սկզբնապես աշակերտների ուսումնական գործունեությունը հսկում է ուսուցիչը։ Բայց աստիճանաբար նրանք սկսում են իրենք հսկել իրենց։ Առանց ինքնավերահսկողության հնարավոր չէ ուսումնական գործունեության լիրաժեք զարգացումը։ Բավարար չէ աշխատանքը հսկել միայն վերջնական արդյունքի հիման վրա, երեխայի համար կարևոր է ուսումնական գործունեության ամբողջ ընթացքի հսկողությունը։ Աշակերտին սովորեցնելը՝ վերահսկելու իր ուսումնական գործունեության ընթացքը, նշանակում է նպաստել այնպիսի հոգեկան ֆունկցիայի ձևավորմանը, ինչպիսին ուշադրությունն է։ Դպրոցին հոգեբանական պատրաստվածության բավական բարդ խնդիր է։ Դպրոցական պատրաստվածությունը պայմանավորում է երեխաների զարգացման առավել բարենպաստ տարբերակը։ Բայց կան նաև զարգացման այլ տարբերակներ, որոնք պահանջում են շտկողական աշխատանքներ։

Դպրոց ընդունվելիս երբեմն հայտնաբերվում է զարգացման որոշակի բաղադրիչի անբավարար ձևավորվածություն։ Շատ մանակվարժներ գտնում են, որ ուսուցանման գործընթացում ավելի հեշտ է զարգացնել ինտելեկտուալ, քան անձնային առանձնահատկությունները։ Դա այդպես է, բայց ամեն դեպքում դպրոցին անբավարար անձնային պատրաստվածության դեպքում ուսուցչի մոտ առաջանում են բավական բարդ խնդիրներ։ Այսպիսի երեխաները դրսևորում են մանկական անմիջականություն, դասերին միանգամից են պատասխանում՝ առանց ձեռք բարձրացնելու, ուրիշներին ընդհատելով, կիսվում են ուսուցչի հետ իրենց զգացումներով, մտքերով։

Ունենալով շատ բարձր ինքնագնահատական՝ նրանք նեղանում են դիտողություններից։ Նրանք դժգոհում են, որ դասերն անհետաքրքիր են, դպրոցը լավ չէ, ուսուցիչը չար է։ Այսպիսի երեխաների դրդապատճառային ոլորտի անհասունությունն իր հետ բերում է գիտելիքի ձեռք բերման խնդիրներ։

Կրտսեր դպրոցականների ընկալումը սկզբնական շրջանում կրում է ընդհանր ացվածբնույթ։ Նրանք դժվարանում են միանգամից տարբերակել առարկաների ու պատկերների ներքին կառուցվածքային բաղադրիչները։

Օրինակ որևէ տեքստ ընթերցելիս նրանք հայացքով թռչում են մի տողից մյուսը, բաց թողնում տառեր ու վանկեր: Նրանք հաճախ են շփոթում 6 և 9 թվերը, ռուսերեն Э և 3 տառերը: Աստիճանաբար երեխաները տիրապետում են ընկալման տեխնիկային, սովորում են դիտել, լսել, տարբերել գլխավորը երկրորդականից: Փոխվում է նաև բառի դերը ընկալման պրոցեսում, այն դառնում է մտավոր հենարան ուրիշ բառիմաստներ ընկալելու համար: Զարգանում է ժամանակի և տարածության ընկալումը:

Երեխաները ավելի շատ դժվարանում են ընկալել ժամանակային հատված-ները, կարճ ժամանակը ավելի ճիշտ են ընկալում, քան տևական ժամանակը: Մեծ նշանակություն ունի նաև տեմպի ընկալումը, ըստ հոգեբան Մեյմանի, երեխաներին ավելի մատչելի է միջին տեմպը: Ժամանակի ճիշտ ընկալումը կախված է երեխա-ների գործունեության ճիշտ կազմակերպումից: Ռեժիմի պահպանումը, ուսումնական առաջադրանքների սիստեմատիկ կատարումը, խաղի և աշխատանքի զուգակցումը երեխաների մոտ մշակում է ժամանակի ճիշտ ընկալումը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ուշադրության զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում ընթանում է ոչ կամածին տեսակից դեպի կամածին ուշադրությունը: Սկզբում երեխաները դժվարությամբ են կենտրոնանում հաղորդվող նյութի և ցուցադրվող առարկաների վրա: Առաջին և երկրորդ դասարաններում ուշադրության կազմակերպման ու կառավարման ուղղությամբ ուսուցչից պահանջվում են մեծ ջանքեր: Նախ պահանջվում է դասը վարել զննական ու ցուցադրական նյութերի օգտագործման մեթոդով, խոսքը դարձնել հուզիչ ու գրավիչ, հարկ եղած դեպքում կիրառել ուսուցման խաղային մեթոդներ: Կամածին ուշադրության զարգացման համար կարևոր է այն, թե որքանով են երեխաները գիտակցում սովորած նյութի կիրառական նշանակությունը:3-4 րդ դասարաններում արդեն երեխաները ուշադիր լինելու փորձ ու հմտություն են ձեռք բերում և կարողանում են ուշադրությունը բաշխել ու տեղափոխել: Երեխաների ուշադրությունը կենտրոնացնելու գործում մեծ է նաև ուսուցչի խոսքի ու աշխատանքի տեմպը:

Դասի ժամանակ ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է ուսումնական նյութի վրա, այն պահում երկար ժամանակ, տեղափոխում աշխատանքի մի տեսակից մյուսին: Ի տարբերություն նախադպրոցականների՝ կրտսեր դպրոցականները առավել ուշադիր են: Նրանք արդեն ընդունակ են ուշադրությունը կենտրոնացնել անհետաքրքիր գործողությունների վրա, բայց նրանց մոտ դեռ տիրապետող է ոչ կամածին ուշադրությունը: Նրանց համար արտաքին տպավորություններն ուժեղ շեղող գործոն են, նրանց դժվար է կենտրոնանալ իրենց համար անհասկանալի, դժվար նյութի վրա: Նրանց ուշադրությունը տարբերվում է ոչ մեծ ծավալով, թույլ կայունությամբ. նրանք կարող են կենտրոնացած մի գործով զբաղվել 10-20 րոպե: Դժվար է ուշադրության բաշխումը և նրա տեղափոխումը մի առաջադրանքից մյուսին:

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հիշողությունը զարգանում է երկու ուղղությամբ՝ կամածինության և իմաստավորվածության: Երեխաները ոչ կամային կերպով մտապահում են ուսումնական նյութը, որը նրանց մոտ հետաքրքրություն է առաջացնում: Կրտսեր դպրոցականները ունակ են նպատակաուղղված, կամային մտապահել իրենց անհետաքրքիր նյութը: Աստիճանաբար, ուսուցումը կառուցվում է կամածին հիշողության հիման վրա:

Դպրոցական ուսուցման առաջին տարիներին երեխաների հիշողությունը կրում է մեխանիկական բնույթ: Նրանք ձգտում են նույնությամբ սովորել ու կրկնել դասագրքից նյութը կամ ուսուցչի պատմածը: Մեխանիկական տեսակից իմաստային ձևին անցնելու համար պահանջվում է կիրառել մեթոդական-հոգեբանական մի քանի հնարներ: Դրանցից են՝

1.ծավալուն նյութը առանձին մասերի բաժանելը և մաս-մաս սովորելը՝ վերջում այն ամբողջացնելով

2. առանձին մասերին վերնագիր նշանակելը

3.նյութի առանձին բաղադրիչների միջև նմանությունների և տարբերությունների գտնելը

4. նման հատկանիշները խմբավորելը և այլն:

Կարևոր հնարներից է նաև պլանային հարցեր կազմելը, դասակարգելը և առանձին մասերի միջև իմաստային կապեր ստեղծելը: Հիշողության և գիտելիքների ամրապնդման մեթոդ է կրկնությունը: Կրկնությունը պետք է կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր անգամ նյութը լրացվի ու հարստացվի նոր փաստերով ու անհայտ կողմերով: Կրկնության նպատակն է ամրապնդել յուրացման ենթակա ծրագրային նյութը և ուղղել տևական հիշողության մեջ: Երեխաներն ավելի լավ են հիշում այն նյութը, որը զգացական տպավորություն է թողնում, կամ որի հետ գործողություն են կատարում:

1.3 ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կրտսեր դպրոցական տարիքում գերակայող ֆունկցիան մտածողությունն է: Դրա շնորհիվ զարգանում, վերակառուցվում են մտածական գործընթացները, իսկ մյուս կողմից, ինտելեկտից է կախված մնացած հոգեկան ֆունկցիաների զարգացումը:

Ավարտվում է նախադպրոցական տարիքից սկսած անցումը ակնառու-պատկերավոր մտածողությունից բառատրամաբանականին: Երեխայի մոտ ի հայտ են գալիս ճիշտ դատողություններ. դատելով՝ նա օգտագործում է օպերացիաներ: Սակայն սրանք դեռ ձևական-տրամաբանական օպերացիաներ չեն: Այս տարիքին բնորոշ օպերացիաները Ժան Պիաժեն անվանել է կոնկրետ, քանի որ կարող են կիրառվել միայն կոնկրետ, ակնառու նյութի հիման վրա:

Կրտսեր դպրոցականների մտածողությունը կրում է կոնկրետ պատկերային բնույթ: Մտածողության կոնկրետությունը դրսևորվում է նրանում, որ նրանք մոտավոր խնդիրները լուծում են միայն այն դեպքում, երբ առկա են նյութական առարկաները կամ նրանց պատկերները: Հաշվի առնելով մտածողության այս հատկությունը ուսուցչի մաթեմատիկակն առաջադրանքները պետք է կոնկրետացնեն զննական պատկերային ձևով կամ առարկայական օրինակներով: Կրտսեր տարիքի երեխաներին բնորոշ է մտահանգման ինդուկտիվ ձևը , այսինքն կոնկրետ առարկայական մտածողությունից գնալ դեպի ընդհանուր, վերացականը: Առաջին դասարանցու համար թիվը մտավոր հենարան դժվար է դառնում առանց կոնկրետ

առարկայի: Թվերի հետ նա գոծողություն է կատարում առարկաների միջոցով, որից հետո աստիճանաբար առարկաներին փոխարինում են մատները, փայտիկները կամ հաշվելի հատիկները :Կրտսեր դպրոցականները ընդունակ են մտավոր գործողություններ կատարել վերացական հասկացություններով:

Կրտսեր դպրոցական տարիքի վերջում դրսևորվում են անհատական տարբերություններ. երեխաներին հոգեբանները բաժանում են «տեսաբանների» կամ «մտածողների», ովքեր հեշտ լուծում են ուսումնական խնդրիները բառային պլանում, «պրակտիկների», ովքեր հիմնվում են ակնառու և պրակտիկ գործողությունների վրա, «նկարիչների»՝ վառ պատկերավոր մտածողությամբ: Երեխաների մեծամասնության մոտ նկատվում է մտածողության տարբեր տեսակների միջև հարաբերական հավասարակշռություն:

1.4 ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կրտսեր դպրոցականների երևակայությունը շնորհիվ նախադպրոցական, խաղային գործունեության, համեմատաբար լավ է զարգացած, քան մյուս հոգեկան պրոցեսները: Դպրոցական ուսուցումը նոր պահանջներ է դնում նրանց երևակայության առջև: Երեխաները ընթերցանության և պատմության դասերին ոչ միայն պիտի սովորեն նյութը, այլև պատկերացնեն ու մտովի վերականգնեն անցյալի իրադարձություններն ու դեմքերը; Սկզբնական շրջանում երեխաների երևակայությունը բնութագրվում է ունեցած մտապատկերների աննշան վերամշակմամբ: Հետզհետե նրանց մտապատկերները լրանում ու հարստանում են նոր տարրերով: Երևակայության զարգացմանը նպաստում են հիշողութան նախկին պատկերները, որոնք երևակայական պատկերների համար դառնում են հոգեբանական <<շինանյութ>>: Երեխաների երևակայության զարգացումը , ըստ անվանի հոգեբան Ժ. Պիաժեյի, անցնում է երեք հիմնական փուլ: Նախնական փուլը կապվում է սաստիկ պատկերների հետ, որոնք դրսևորվում են գրեթե առանց փոփոխությունների: Երկրորդը կինետիկ պատկերների փուլն է, որը համարվում է ստեղծագործական երևակայության նախադրյալը: Կրտսեր տարիքի երեխաների երևակայության տիրապետող տեսակը վերարտադրողական տեսակն է: Նրանք

փոխում են պատմվածքների սյուժետային ուղղվածությունը, որոշ պատկերներ կրճատում, մյուսները՝ ընդարձակում: Երեխաների երևակայությունը ուղեկցվում է բարձր հուզականությամբ, հատկապես նկարելիս, գույների ընտրություն կախված է նրանց տրամադրությունից ու հոգեվիճակից: Երևակայական մտապտկերները դառնում են երեխաների ստեղծագործական ընդունակությունների հոգեբանական հիմքը:

1.6 ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Նախադպրոցական տարքում սկսված անձի զարգացումը՝ կապված դրդապատճառների ստորադասության և ինքնագիտակցության կայացման հետ, շարունակվում է կրտսեր դպրոցական տարիքում: Բայց կրտսեր դպրոցականը գտնվում է այլ պայմաններում. նա ներառված է հասարակայնորեն նշանակալից ուսումնական գործունեության մեջ, որի արդյունքները բարձր կամ ցածր գնահատվում են մոտ մեծահասկաների կողմից: Դպրոցական առաջադիմությունից, գնահատականներից ՝ ինչպես լավ, այնպես էլ վատ, անմիջականորեն կախված է այս փուլում անձի զարգացումը:

1.7 ԴՐԴԱՊԱՏՃԱՌԱՅԻՆ ՈԼՈՐՏ

Երեխան իր դպրոցական կյանքի սկսզբում, ունենալով դպրոցականի ներքին դիրք՝ նա ցանկանում է սովորել: Ընդ որում սովորել լավ, գերազանց: Ուսման բազմազան սոցիալական դրդապատճառների կողքին գլխավոր տեղը զբաղեցնում է բարձր գնահատականներ ստանալու դրդապատճառը: Բարձր գնահատականները փոքրիկ աշակերտի համար այլ խրախուսումների աղբյուր է, նրա հուզական բարեկեցության հիմքը, հպարտության առարկան: Երբ երեխան հաջողությամբ սովորում է, նրան գովում է և ուսուցիչը, և ծնողները, նրան որպես օրինակ են բերում այլ երեխաների: Ուսման այլ՝ լայն սոցիալական դրդապատճառները՝

պարտք, պատասխանատվություն, կրթության ստանալու անհրաժեշտությունը և այլն, նույնպես գիտակցվում են աշակերտների կողմից:

Ոչ այնքան լավ սովորող աշակերտների մոտիվացիան յուրահատուկ է. այն տարբերվում է առաջադիմությամբ բարձր աշակեևտների մոտիվացիայից: Որոշ սոցիալական դրդապատճառներ նրանց մոտ ի հայտ են գալիս երրորդ դասարանից:

Բավական հետաքրքիր են նաև ճանաչողական հետաքրքրությունների տարբերությունները: Տարրական դասարաններում ինչ-որ առարկա խորությամբ ուսումնասիրելու հետաքրքրությունը հազվադեպ է հանդիպում, սովորաբար այն համադրվում է հատուկ ընդունակությունների վաղ զարգացման հետ: Այսպիսի երեխաները, որոնց համրում են օժտված, շատ քիչ են: Կրտսեր դպրոցականների մեծամասնությանը բնորոշ են ոչ այդքան բարձր մակարդակի ճանաչողական հետաքրքրություններ: Բայց առաջադիմությամբ աչքի ընկնող երեխաներին գրավում են տարբեր, այդ թվում նաև՝ բարդ ուսումնական առարկաներ: Նրանք իրավիճակային են. տարբեր դասերի ընթացքում ուսումնական տարբեր նյութերի ուսումնասիրման գործընթացում նրանց մոտ նկատվում է ինտելեկտուալ ակտիվության վերելքներ, հետաքրքրության փայլատակումներ: Առաջադիմության աչքի չընկնող շատ աշակերտներ ինտելեկտուալ առումով պասիվ են: Նրանք հետաքրքրություն են դրսևորում ոչ հիմնական առարկաների, երբեմն նույնիսկ մեկ առարկայի, օրինակ ֆիզկուլտուրային կամ երգի դասերին: Անընդհատ ցածր գնահատակններկ հետ կապված բարդ, դժվար հասկանալի առարկաները, հազվադեպ են առաջացնում ճանաչողական մոտիվացիա: Առարկայի բովանդակության նկատմամբ հետաքրքրությունը սովորաբար կապված է նյութի նորույթի հետ, աշխատանքի կոնկրետ տեսակները խաղայինին փոխարինելու հետ:

Հասնելու դրդապատճառը տարրական դասարաններում դառնում է գերակայող: Բարձր առաջադիմությամբ երեխաների մոտ վառ արտահայտված է հաջողության հասնելու դրդապատճառը: Հաջողության հասնեկու մոտիվացիան ճանաչողական հետաքրքրությունների հետ, առավել արժեքավոր դրդապատճառ է, այն պետք է տարբերակել հեղինակային մոտիվացիայից:

Հեղինակային դրդապատճառը բնորոշ է լիդերի հակումներ ու չափազանց բարձր ինքնագնահատական ունեցող երեխաներին: Այն դրդում է աշակերտին առավել լավ սովորել համադասարանցիներից, առանձնանալ նրանցից, լինել առաջինը:

Ցածր առաջադիմությամբ աշակերտների մոտ հեղինակային դրդապատճառը չի զարգանում: Հաջողության հասնելու մոտիվացիան, ինչպես նաև բարձր գնահատական ստանալու դրդապատճառը բնորոշ են դպրոցական ուսուցման սկզբանական շրջանին: Բայց այս ժամանակ էլ հաջողության հասնելու դրդապատճառին զուգահեռ դրսևորվում է անհաջողությունից խուսափելու մոտիվացիան: Այս մոտիվացիոն միտումը զարգանում է ամբողջ տարրական ուսուցման ընթացքում, ինչի հետևանքով ցածր առաջադիմությամբ աշակերտները հաճախ զրկվում են հաջողության հասնելու և բարձր գնահատական ստանալու դրդապատճառներից, իսկ անհաջողությունից խուսափելու մոտիվացիան ձեռք է բերում նշանակալից ուժ: Ցածր առաջադիմությամբ աշակերտների մոտ առաջանում է փոխհատուցող մոտիվացիա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն սովորել ենք երեխային դպրոցին պատրաստելը կրթական հոգեբանության ամենակարևոր խնդիրներից է: Այս խնդիրը հատկապես արդիական է դարձել վեց տարեկան երեխայից սկսաց երեխաների ուսուցման անցման և նոր,շատ առումներով,այլընտրանքային կրթական ծրագրեր: Դպրոցական կրթության սկզբի հաջողությունը, ինչպես նաև նախնական շրջանում երեխայի հարմարվելու աառանձնահատկությունները մեծապես կախված են այն բանից, թե որքանով նախադպրոցական տարիքի հոգեբանական և անհատական բնութագրերը հաշվի կառնվեն նախապատրաստական շրջանում: Հավասարապես կարևոր է երեխայի դպրոցական պատրաստակամության ախտորոշման հարցը: Ըստ բազմաթիվ հետազոտողների, հիմնական դժվարությունները, որոնք ծագում են երեխաների մոտ հարմարվողականության շրջանում, շատ դեպքերում անբավարար դպրոցական հասունություն են: Հետևաբար, հատկապես արդիական է դպրոցական հասունության ախտորոշման, երեխայի մտավոր զարգացման մակարդակը որոշելու խնդիրը: Ճանաչելով մարդու անհատական- հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, իմանալով նրա կենսապայմանները՝ կարելի է արդյունավետ կրթական միջավայրստեղծել նրա իմացական ներուժի, ակտիվության, ունակությունների, օժտվածության, տաղանդի, բացահայտման և զարգացման համար: Անհատական առանձնահատկությունների հաշվառումը և երեխայի բացառիկության, անկրկնելիության արժևորումը հումանիստական մանկավարժության հիմնարար սկզբունքներից են և աշակերտակենտրոն կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնական պահանջը:

Եվ այսպես իմանալով կրտսեր դպրոցական տարիքի երեխայի հոգեբանական առանձնահատկությունները՝ հնարավոր է լինում լիարժեք և հիմնավոր աշխատել, ուսումնական պրոցեսը դնել բավարար հիմքերի վրա, բավարարել կրթության և դաստիարակության արդի պահանջները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ն. Ե. Կովալև, Բ. Ֆ. Ռայսկի, Ն. Ա. Սորոկին <<Մանկավարժության ներածություն>>, <<Լույս>> հրատարակչություն, էջ 190-197, Երևան 1977:
2. Շ. Ս. Սիմոնյան, Ա. Ա. Լալայան <<Հոգեբանության մի քանի հարցեր>>, <<Լույս>> հրատարակչություն, էջ 20-81, Երևան, 1980:
3. Պրոֆ. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ <<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>>, <<Լույս>> հրատարակչություն, էջ 84-83, 108-121, Երևան, 1977:
4. Վ. Ա. Կրուտեցկի <<Մանկավարժական հոգեբանության հիմունքները>>, <<Լույս>> հրատարակչություն, էջ 71-112, Երևան, 1976:
5. Гуткина Н.И. Психологическая готовность к школе. М., 1993.
6. Համացանց, https://armineab.wordpress.com/2014/04/11/